



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


№ 11.

Վ. ՓԱՓՈՀԵԱՆ

ԱՐԱՂԱՅԻ ԴԱՅԴՈՒՄ

(ՊԱՏՄԻԱԾ)

Գին 1 կգ 4 հոֆ.



ԲԱԳՈՒ
ՊՈ.ՐՈՒ. „Ա.ՍՕՐ.”
1903

891. 99
Կ-31

13 APR 2011

8.01

THIS IS A
REFERENCE
ITEM

Ψ·ΦΠΦΠΩΤΕΛΛΩ

891.99

4-31 47

ԱԲԱԴԱՅԻ ԴԱՇՏՈՒՄ

(ՊԱՏՄՈՎՔ)

100
140



Բ. Ա. Գ. Ա. Ի.
ՏՊԱՐԱՆ „Ա. ԲՈՐ“
1903

28.08.2012


59.937

2 աւ

ԱԹԱՅԻ ՎԵՐԱՎԱՐ

(ՊՐԱԿՏԻԿ)

Дозволено Цензурою. Тифлисъ, 16 Августа 1903 г.



ԱՐՄԵՆԻԱ ԴԱԾՈՒՄ

I.

Ընդհանուր մի նիզակախաղի առիթով —
որ յաճախ էր տեղի ունենում Սքաղային իշխող
քիւրդ ցեղապետ Մուսա աղայի վրանների ա-
ռաջ — ամէն կողմից գալիս հաւաքւում էին դաշ
տի միւս մանր ցեղապետները, ինչզէս նաև
Մուսա աղայի որդի Մահմադ աղան, որ վրան
խփել — բնակւում էր դաշտի հիւսիսային բլուր-
ների ստորատում։

Լուսաբացից սկսած, ամէն կողմից խումբ
առ խումբ երեսում էին ձիւորներ, հեծած՝ աշ-
խոյժ, կատաղի նժոյգների, ցեղապետնին առ-
ջիկց, նիզակների սուր ծայրերը փալիեցներով
օդի մէջ, սպիտակ շղարշեայ թիկնոցները հո-
վին տւած։

Նժոյգները խրխնջում էին ու կայտուում
բարձրահասակ խոտերի և ծաղկաւէտ մարգերի
մէջ քայլելով. ձիւորները գւարթ, ովհորւած
առաջիկայ զինախաղով. բարձրագոշ վիճում

Էին և ճգնում տեսնելու թէ դաշտի այս—այն կողմից երեցող խմբերը որ միւզիրի կամ որ ցեղի մարզիկն էին:

Սրբը դեռ չէր ծագել, սակայն արեելքից մի լոյծ ու շքեղ կարմրութիւն սկսում էր տարածել հորիզոնի բարձրերում, սպիտակ ցանցը իւ ամպերի եղերքներին: Մշուշը, որ բաց մանիշակավոյն էր դարձել այժմ, սկսում էր երեան հանել իր միջից բլուրներ, մաշառոտ գետափը: Եւ գետը, սլորապասյտ, հոսանուտ արծաթի նման՝ դարբաւում—կտրում էր դաշտն ու մի ծայրավ անհետանում դէպի հեռաւոր խորքերը:

Մշուշի հետ հեռափց երեւում էին գոյնզոյն, ոև և կապոյտ հագուստներով աւելի, կարմիր կամ ճերմակ նժոյգներ հեծած այլ խմբեր ևս, արշաւակի կետրոնանում էին դէպի Մուսա աղայի տափաւարները:

Թարմ, սքանչելի դեփիւռով միասին, օգը լի էր դաշտից ելած բազմատեսակ, զայնզպոյն ծաղիկների արբեցուցիչ բուրմունքով, լի նաև հարիւրաւոր թռչունների դայլայլով: Մարգա հասակ խստերի մէջ փափկաւմ էին զգգոռն վտաներ, թաւալում բլուրներից, ցայտում, շիթերով զարդարում կանաչ թաւշեայ մարգագետինները:

Մուսա աղայի երեք մեծ վրանների առաջ վառւող կրակի ծուխը անօսր բարձրանում—տարածւում էր դաշտի կողմը և կարծես նշան էր ներկայանում համեռ խմբերին:

Եւ Արագայի մեծ ցեղագետը լւացւած, աղօթքն արած նստել էր վրանի առաջ: Հարիւրաւոր ոշխարներից բաղկացած հօտը փոչի հանելով և բառանչելով՝ դէպի բլուրն ի վեր էր գնում, մինչ մի խումբ քիւրկեր էլ զրադւած էին վրանից մի քիչ ցած պարզւած հարթ տարածութիւնը մարզերունիղակախաղի համար:

Ծերունի էր Մուսա աղան, 60-ից ահց, սակայն դեռ միմիայն ալիխառն էին մազերը: Ծեսուր ածիլած, ընչացրը հաստ ու երկար, զոռողաբար ոլորւում, ծայրերով ցըցւում էին դէպի ականջները: Երկարահասակ ու լայնալանջ՝ կրում էր նա նուրբ կապոյտ ասւէ վերնազգեստ, Հալէրի կարմիր մետարսից զրուն (բաճկոնակ), զլսի ասեղնագործ քլօլողը ոլորուն մետարսեայ եազմանների միջից պարզում էր իր վնջաւոր գագաթը, ոտներին կրում էր ցեղապետական, մարուր օծած կարմիր կոշիկները:

Նրա առաջ ցած աթոռակի վրայ գրել էին սուրճ, կաթ, կարագ ու մեղք, և երկու բիւրդ քիչ հեռու կանգնած, պատկառանօր սպասում էին աղայի հրամաններին:

Եւ մինչ հեռաւոր խմբերը մօտենում էին, ըլուրների ետեից սկսում էին երեալ արեի առաջին ռառը շողբերը, որոնք դալիս լողանում էին ցողալից խոտերի մէջ և տարածում—ոսկեզօծում ընկարձակ գաշտի ծաղկաւէտ տարածութիւնը...

II.

Ամենից առաջ գետեզը հասաւ Մահմադ աղան իր շրախմբով։ Միւս խմբերը կետրոնացան այնտեղ և այդպէս, մեծ ցեղապետի որդին, հարիւրի չափ ձիաւորներով շրջապատւած, վրանների առաջ եկաւ։

Մուսա աղան ժպիտը դէմքին ձեւրը պարզեց իր հսկայ որդուն, թողեց որ համբուրէր, ինքն էլ շրթունքները կացրեց նրա ճակատին և հրաւիրեց նստելու կողքին։

Ամենքն իսկոյն, պատկառելի հեռաւորութեան վրայ կանգ առած՝ ցած թռան ձիերից. կարմիր կոշկաւորներն առաջ անցան, նրանց հետեցին միւս ցեղապետները և Մուսա աղայի երկու կողմը շարւելս կիսակլոր նստեցին մօտ տասը մանր—մունք ցեղապետներու միւգիրներ։

— Գալուստներդ բարի. խօսեց Մուսա աղան քաղցր և ուրախ ժպիտով—ինչ կայ,

ինչ չը կայ դաշտում. ինչ նորութիւններ կասես մեզ, Մահմադ աղա։

Որդին իր հաստ մարմնով շարժւեց տեղումը, ժպտեց, քիչ լոեց և ասաց.

— Ի՞նչ պիտի լինի.. . Օտում ենք, որ սում, քնում ենք—գլարճանում.. . Մզոն միայն քաղաքից երէկ լուր բերաւ, որ Վանայ փաշան ենքրկի է ուզում գալ... Մէկ էլ որ, ֆլաները (հայերը) էլի խմբով, ամեն բան թողնում են և ուսի հողը անցնում.. .

— Հա. վրայ տւաւ Մուսա աղան—ես էլ լուր ունիմ։ Հանգիստ չեն թողնում նրանց. ի հարկի, կ'երթան.. . Լօ, երկրագործին տուրքերի թեթեութիւն է հարկաւոր.. . երկրագործին փող սրաեղից է, որ փառով տուրքը տայ.. .

— Դէհ, մենք էլ այդ լաւ գիտենք, կորքանդամա (քեզ մատաղ), ասաց մի ցեղապետ—փող չենք առնում մենք, ցորեն, դարի, տաւր.. .

— Փլաները աշխատաւոր են, ես ու իմ Աստւածը. ձայնեց այն կողմից մի ուրիշ ցեղապետ—բաւ գործում են, լաւ էլ տուրք տալիս.. . Զը պէտք է վախեցնել այսրան, որ մեր հողերը թողնեն ու գնան։

— Փլան շատ վախկատ է. ասաց Օսման աղան—կամ պիտի հնագանդի կամ թողնի

վախչի։ Մեր դաշտի նապաստակը՝ նրանից սըրտու է... Խմ հողիցն էլ 10—15 տնտոք վախել են, ուշ իմացայ. թէ չէ ո՞վ կը թողնէր. եզին էլ կը թողնեն որ աշխատանքից վախչի...»

Եւ այսպէս, ցեղագետներից իւրաքանչիւրը մի կարծիք յայտնեց հայերի մասին. — «Եկը գովեց նրանց հաւատաբարմութիւնը, միւսը, դպաւ որ այդ հաւատաբարմութիւնը մնում է նրանց մէջ վախից. երրորդը յայտարարեց որ հայը չարքաշ է, անասունից էլ աւելի դիմացկուն. միւսը առարկեց թէ էշն էլ չարքաշ է, որովհետեւ ստիպում են։ Վերջապէս մի քանիսներն պնդեցին որ հայը համբերող է առհասարակ ու այրպէս ծնուռմ է բնականից, ինչպէս որ եզը բնականից ծնուռմ է լուծի համար».

Այստեղ Մուսա աղան, որ մինչև այդ լուռ՝ լուռմ էր, արհամարհական ժայիտ դէմքին՝ կարդաց իր վճիռը։

— Հայը, ասաց նա — հաւատարիմ է որովհետեւ վախենում է. չարքաշ է որովհետեւ ստեղծւել է միայն ծառայելու համար. և դիմաց կուն է, որովհետեւ ծեծի սովոր է։ Բայց — աւելացրեց նա հեգնութեամբ — հայը ունի այնպիսի յատկութիւններ, որ քիւրդը չունի...»

— Հետ... կանչեցին մի քանիսը — քիւրդը չունի...»

— Զունի, պնդեց ցեղագետը — Հայը, օրինակ, սատանայ է, խորամանկ է. նրան խարելը հեշտ չէ։ Եւ դրա համար էլ, որքան ճնշում է, որքան կողոպտում, այնքան խոնարհ է դառնում, գծուծանում և... հարստանում... Քիւրդը չունի այդ յատկութիւնը. քրդի սիրաը լեզուի ծայրումն է և ձեռքիս ափի նման լերկ, առանց ծածկոցի։

Թէ ցեղագետի դէմքից ու ձայնից երեւում էր որ նա ծաղրով և արհամարհանքով էր ասում այդ բոլորը, բայց Մահմուդ աղան տարցաւ։

— Ի՞նչ... բացականչեց նա — միթէ իմ հայրը երկու լեզվանիսութիւնը լաւ յատկութիւն է համարում.։ Հայի խորամանկութիւնն էլ նրա գծուծանութեան արդիւնքն է. ահա թէ ինչ։ Աղնիւ, մաքուր սիրտ ունեցող մարդը պէտք չունի խորամանկութեան... Ես երբէք չէի կամենալ հայի նման հպատակ ունենալ. առորին շատ աւելի լաւ է։

— Ասորին մեղ խարել չի կարող. Ժպտաց Մուսա աղան գարճանալով, որ որդին տաքանում էր։ — Հայը մեղ միշտ խարում է. խարելմ է — երբ կարծում ես որ հաւատարիմ է խարձում է երբ հնագանդ է. նոյնպէս խարում է երբ համբերող է... Այն, շատ էլ ախորժալի

չէ հայ հպատակ ունենալը. բայց ասորին էլ մի բան չէ... Ես կը կամենայի միշտ քիւրդերի ցեղապետ մնալ. քիւրդը աղնիւ է, քաջ և մաքուր սիրտ ունեցող...

Սրեն արդէն բարձրացել էր այժմ և սկսում էր դուրս գալ բլուրների ետևից: Վրանների առաջ փռւած ստեղը կարճանում էր և հեռու կանգնած քիւրդերը սկսել էին անհամբեր դառնալ:

Բայց Մահմուդ աղան, որ տաքացել էր, գոչեց.

— Լաւ, աղաններ. խօսք չը կայ որ քիւրդից լաւ աղդ չը կայ աշխարհիս երեսին: Բայց, տեսնե՞նք. եթէ այնպէս լինի որ Սուտած մեզ առաջարկի թէ „Ել—աղասիննը, ահա ձեզ հայ, թուրք և ասորի, ընտրեցէր թէ որին հպատակ կը վերցնէք“—Ի՞նչ կատէիք, ո՞վ որին կը գերադասէր:

— Երեքն էլ. ծիծաղեց մի ցեղապետ և սրճի բաժակը ծառային պարզեց—երեքն էլ եկամուտ բերող առլաներներ են:

— Այդ չեղաւ, միշամտեց Մուսա աղան—իմ որդին առաց որ սիստի երերից միայն մէկը ընտրել... Ես իմ կողմից՝ ոչ մէկին չեմ վերցնիլ այդպիսի դէպքում. երեքն էլ ոչինչ ցեղեր են:

— Այդ էլ չեղաւ, հայր, ժպտեց Մահմուդ աղան—եթէ ստիպէ որ անսպատճառ մէկն ու մէկը վերցնեն...

— Ես թուրքին կ'ընտրեմ. խօսեց կարմիր կոշկաւոր մի ցեղապետ—ինչքան էլ լինի՝ նախ հաւատակից է, յետոյ՝ աւելի մաքուր աղդ է և մանաւանդ... սիրուն կանայք ունին:

— Սոենք ասորիներն էլ սիրուն կանայք ունին, հայերն էլ. առարկեց Զաֆար աղան—բայց, տակի մհացած երկուսից ես ասորին կընտրեմ, թէի նա մի քիչ ըմբոստ է... Սիրում եմ ես անսանձ ձիերի, կռւող, ովքմ գնող անսունների զսպել, քան մի ոչխարի հետ գործ ունենալ. ոչխարի, որ խփելու համար գեռ փայտը չը բարձրացրած՝ մէջը դէմ է տալիս և լեզուն կախում...

— Դ հարկէ. ասաց Օսման աղան—ինչի՞ն նման է, որ միշտ խօսքդ լսեն և գու խփելու, բարկանալու հաճոյքը չունենաս... ինչի՞ն նման է օրինակ, հանդարտ տղան, որ միշտ լսում է քեզ, հնազանդ է, համակերպող, համբերող... Զէ, ՚ի հարկէ, ասորին լաւ է:

Եւ երբ բոլորը ծիծաղում էին Օսման աղայի խեղկատակօրէն ասւած այդ խօսքերի վրայ, մի ծերունի ցեղապետ, որ մինչև այդ լուռ էր, ասաց յանկարծ.

— Զահմէլ էք, մղաները ծիչտ է, հայլ
մեղկացնող է, զէնքերը անգործ, սուրը ժան-
դոտ թողնող, բայց կերակրող է։ Հայն է, որ
ամենից աւելի անտրտոնից տալ զիտէ։ Ինչ որ
ուղենաս՝ կը տայ. — ստացւածք, հոգի, պա-
տիւ... Ե՞նձ թողէք հային. թափած ատամներ
ունեցող գայլի պատառ է...»

Սյս անգամ Մուսա աղան էլ բարձրաձայն
ծիծաղեց. յետոյ, սորի ելաւ և ասաց.

— Բաւական է. չ'արժէ խօսել... սկսենք
նիզակախաղը։

Եւ մինչ իբարանցումն սկսում էր քիւրդե-
րի մէջ, արել հասել ովոգում էր վրանները իր
պայծառ ճառապայմներով։ Յօդի և ջրային շո-
գիները նոր մշուշով քօղաւորում էին զաշտի
մեծ տարածութիւնը։ Փշում էր զով քամի, որ
վեհափառօքէն օրօրում էր խոտերի կատարնե-
րը, կռացնում դէպի միմեանց, սուրալով սա-
հում նրանց զլուխների վրայից և գալիս էր
ծածանելու նիզակախաղի ելած քիւրդերի բա-
րակ թիկնոցները...»

III

... Բայազեղից Թէփէրիզի վրայով Վան գնացովի
համար մի կատարեալ զրախտ է թւում Արա-
գան, երբ 10-12 ժամ անընդհատ յերկ ժայռե-
րի, հրարդիսից զոյցած լեռնակոյտերի և ու
ու ժանդու սարերի միջով քայլելուց յետոյ,
յանկարծ բացւում է նրա զեղատեսիլ սարա-
ծութիւնը, ուր զոյնզգոյն ծաղիկներ, մարդա-
հասակ խօս, զետ և փշող զով քամին յաջոր-
դում են միմեանց։

Կարծես զժոխային չորութիւնից ու տա-
պից ելել՝ մտնում ես զրախտային բուսականու-
թեան մէջ։ Ոտներիդ տակից սկսած՝ թաւիշ կա-
նաչը, քանի զաշտը իջնում է, սոտնում է խո-
տային անտառի մհծութիւն, ուր ձիաւորը կա-
րող է թագւել՝ առանց երեալու։ Վատակները,
շոշափելով շրեղ ափերը՝ սահում սովոսկում են
կապոյտ ու դեպին մեծ արտերի միջով. զետը
սոտոստում է խոխոնչիւնով՝ վերջին ժայռերի
զլխով և մեղմիկ ծորում դէպի մացառուտները...»

Սի, յերկ ժայռերի մէջ տիրով ահարեկ
լուսութեան, սուր կերպով յաջորդում են՝ բնու-
թեան շշուկը, թռչունների ճռւողիւնը, այս-այն
կողմ ցըւած նախլիների բառաչները։ Սյստեղ

կեանքն է, մինչ քիչ առաջ տասը ժամ ան-
ընդհատ քայլում էր ՚խորին լուսվթեան մէջ,
վախենալով ինքդ էլ ձայն հանել:

Սյստեղ գէմբդ գւարթանում է, թոքերդ
լայնանում, սիրտդ հրճում. կամենում ևս դն
էլ կանչել, երգել, ապմկել...

...Ու մինք, որ ոչ մի րոպէ չէինք կանգ
առել այն լուռ ու մռայլ լեռների մէջ, որ ըշ-
տապում էինք արագ անցնել այն վաժան. վախ
ազդող ամայութիւնից, երբ Արագայի ծայրը
հասանք, ազատ շունչ առինք։ Առանց իրար
յայտնելու, միահամուռ զգացմունքով ցած թր-
ռանք ձիերից, թողինք նոցա՝ լայնացած որն.
գունքով դալար խոտին վաղելու և փուեցինք
մարգագետինի վրայ, անուշահոտ գիներբուկնե-
րի կողքին։

Սյստեղ կարծես զարուն էր, թէ Յուլիսի
մէջ էինք։ Սյստեղ մշտական թաց ու վտակ-
ներով ջրաւծ հողի մէջ՝ զարհանային ծաղիկ-
ներ էին բուսնում միշտ։

Մի վճիտ աղբիւր, ոև սարերից դուրս բըզ-
խելով՝ գալիս սապգում էր մեր առաջ ու զնում
տարածելու գէալի դաշտի խոտերը։

Ու երկար մեղնից ոչ ոք չը խօսեց։ Ակնարկ-
ներս ցածում փուող դաշտին, բերաններս փը-

չող գով քամուն, անշարժ վայելում էինք ընու-
թիւնը։

Քայց, ոչ մի մարդկային ձայն։ Դա անսո-
վոր էր ինձ համար. Զէր երեւում ոչ մի քիւրդ,
որից այնքան վիստում էին դաշտի ամեն կող-
մամ տարիներ առաջ։

Միթէ այս այն Արտղան չէր, որ Մուսա
աղան, իր հալատակ ու բարեկամ մանր, բաղ-
մաթիւ ցեղապետները, նրա որդիները՝ բաղ-
մաթիւ հետեւրգներով՝ դարձրել էին չէն ու լի
ամարանոց։ Այն Արագան, որի հէնց այս բար-
ձրից նայելով, ամէն կոզմ ցոյց էր տալիս գոյն-
զգոյն վրանների կոյտեր. աջ կոզմը, հորիզոնի
բրուրների կողքին, աղայի կարմրագոյն տաղա-
ւարն էր. դաշտի ամէն ուղղութեամբ արշաւում
էին ձիաւորներ, մարգագետինների վրայ կայ-
տըռում էին ձիեր և ամէն կոզմից լաւում էին
աղմուկներ՝ երրեմն էլ մի ձգւած լո-լո-ի հե-
ռաւոր մեղեղի, հովկի սրնկի դայլայլ...

Սյժմ և ոչ մէկը։ Շատ հեռու միայն, ոնին
էին տալիս մի քանի վրանանման բաներ. գետ-
եղբում, զանդաղ, վլուխնին կախ՝ հինգ-վեց
կոտեր, և, հաղիւ ուրեմն, ուժգնութեամբ կը-
ուցող խոտերի շարժումները վկայում էին, որ
անցնում է մի ձիաւոր կամ կայտում մի ձի...

Տարօրինակ կերպով ճնշւում էր սիրտս այդ

ամայութեան առաջ։ Նստում եմ, ելնում, աշխատում եմ, գիտակով լինի, որոնել Մահմուդ ազայի վրանները, Մուսա-ազայի մեծ տաղաւարը, բլուրների վրայ արածող հարիւրաւոր ոչխարներից կազմած հօտերը գտնէ... ձգնում եմ խոտերի շարժումներից թւել դաշտի մէջ եղած կենդանութեան մնացորդները, բայց գտնում եմ միայն ամայութիւն, անշարժութիւն՝ մարդահասակ խոտերի անտառի մէջ և դատարկութիւն՝ մի ժամանակ վրաններ գտնուող բացւածքներում։

— Սրադան չէ այս. հարցնում է ընկերս, որ առաջին անգամն է մտնում այդ կողմերը։

— Զը գիտեմ. ասում եմ շւարած — Գաշտը նոյնն է, բայց միջի կենդանութիւնը չը կայ։ Կարծես սառել է Սրադան։

Ու հեծնում ենք, լուռ իջնում գէպի դաշտը։

— Սյոպէս եթէ զնայ, խօսեց ընկերս — զիշերելու տեղ չը պիտի գտնենք. խսկ գու ասում էիր որ այս դաշտը լի է վրաններով, լի ընակիշներով։

— Սառել է Սրադան. մրմնչումեմ ճնշւած։

Սյոպէս է. սառել էր կենդանի դաշտը։ Մի ամբողջ ժամ քայլեցինք, թաղւեցանք խոտի ահտառի մէջ, կտրեցինք գոյնզգոյն մարդեր, անցանք վճիտ վտակներ, ելանք ու իջանք բլուր-

ներ և սակայն ոչ ոք մեր գէմը չը գուրս եկաւ, ոչ մի քիւրդի բօրօղ չը տեսանք, եթէ չը հաշւենք մի քանի նախրորդների, որոնք մեր անցնելիս՝ ցցում էին հեռում և անշարժ՝ մեզ հայում մինչև անհետանալլ։

Հօտեր խսկ չը կային։ Նախրորդների շարջը, մարդերի վրայ մի քանի տասնեակ ոչխարներ, գլուխնին միմեանց մէջը՝ նիրհաւմ էին. մի քանի զոյգ չներ՝ հազիւ մի աշքն էին բաց տնում մեզ հետևելու և մացառուտների մէջ մի քանի կոփիք՝ որոնք և ոչ խսկ նայում էին մեր կողմը։

— Ո՞րտեղ ենք գնում. հարցնում է ընկերու — վերջ չունի այս դաշտը։

— Այդ հեռուի վրանները։

Սյոտեղ, մի խումբ ցած, ոե, խղճուկ վրաններ էին երեսմ միայն. ընդամենը 5—6 հատ, ծածկւած մազեվլն զործւածքներով կամ թաղիքով։ Մնում էր այնտեղ զնալ զիշերելու, եթէ միայն ընդունէին մեզ։

Զը գիտէի խսկ ինչ էին։ Քիւրդեր կը լինէին — զա պարզ էր. Բայց ինչ քիւրդեր. մեցորդ որ ցեղի և մամ մարդիկ արդեօք։

Ու մի ժամ յետոյ, անցնելով մի առւակից, մտնում էինք վրանները։

Եները նախ մեզ գիմարեցին. յետոյ երե-

100
140

ւացին մի քանի մերկանդամ սկամորթ մանուկ-ներ, մի երկու քիւրդ կանայք և վերջապէս մեր առաջն ելաւ մի նիհար ծերունի, որ կասկածատ աչքերով զննեց մեզ, թողեց որ իշնէնք ձիացու անշարժ կանգնած մնաց իր վրանի առաջ:
— Բարի, ծերունի, զոշեցի հս-հիւր չէք կամենալ:

— Համեցէք, ասաց նա:

Եւ նկատում էի, մեր զէնքերն էր զննում բաւական կասկածանօք, մեր զէմքը դիտում. կարծիս վիտուում էր դիտենալու՝ թէ ինչ էինք մենք:

VI

... Ու երբ հիւրասիրել էր մեզ, տխուր և մոռալ եղիդի քիւրդ ծերունին հարցրեց մեր գնալու տեղը:
— Վահ, ասացի հս:

Գլուխը երեցրեց: Վանում կեանքը լաւ դրութեան մէջ չէր, աղմուկ կար, արիմն էր հոսում. տւելի լաւ կանէինք չը գնալ այնտեղ, եթէ միայն մենք ես, կայծը վառ պահելու վառոգի հատիկներ։ չէինք:

— Չեմ հառկանում, ծերունի, ասացի—
ինչ ես ուզում ասել:

— Դուք հայեր չէք:

— Ո՛չ, ուստ ենք:

Լուց: Պարզ էր որ չէր հաւատում: Վաղուց ի՛ վեր եղիդի քիւրդերի այդ խումբը բնակեւլու էր զալիս Արագայում, երբ շոգերը սկսում էին հայագիդի կողմերում: Վահ չէր եղել, ոչ. բայց անցնողներից լուրեր ուներ: Ֆրենք կռիւ, արխւն չէին սիրում. խաղաղ ապրող ցեղ էին և չէին կամենալ խառնը-ւել ուրիշի զործերում:

Առ հասարակ հնիրջնկալս սակաւախօս էր, մռայլ և տխուր, զրկթէ չէր ժպտում: Վահն-ներումն էլ մռայլ էր տիրում. ոչ մի աշխուժութիւն, ոչ մի աղմուկ կամ շարժուղութիւն:

— Ի՞նչ է եղել Արագային: Հարցրի հս վերջապէս—հինգ վեց տարի առաջ եղել եմ ես այս կողմերում, հիւրասիրել Մուսա աղայի մօտ: Արդեօք այդ էլ աղասին և նրա որդիները, Մահմուկ աղան կամ Օսման և Զափիր աղաները այդ հս Արագա չե՞ն զալիս ամառը: Այժմ կարծես ամայի, դատարկ է Արագան:

Տարօրինակ կիրապով ինձ նայեց ծերունին պահ մի, յետոյ ասաց.

— Սյո, դատարկ է, ինչպէս դատարկ է լինում վշերից մարրւած արտը՝ մինչև ցանելը... Բայց իմ աղան չը զիտէ թէ ինչե՞ն են կատարում այս և մեր երկրի ուրիշ զաշտերի վրայ:

Եւ երբ ասացի որ ոչինչ չը զիտեմ Արա-

դայում եղածներից, ժպտեց, լուս՝ մտածեց միք
բոպէ և ասաց ծանրութեամբ.

— Թէ իմ աղաները կուզեն, ես նրանց
մի երգ կը երգեմ: — Այդ երգը լսել եմ մի
քիւրդ երգչից, որ անդադար ման է դարիս
աշխարհից-աշխարհ ուր քիւրդ կայ և երգում է
իր երգը:

Յետոյ ելաւ և հրաւիրեց մեղ նստելու թիշ
հեռու, կանաչ խոտերի վրայ:

Սրել մայր էր մտնում, ամայի դաշտը
մթնում էր հետղհետէ և աւելի լուս կերպա-
րանք ստանում. գագարել էին թռչունների
ձայները, մշուշի մէջ թագնուում էին հետաւոր
կատարները և բլուրները.

Եւ երբ տեղաւորել էինք, ծերսւնին սկսեց
երգել: Ու նրա գողգոջիւն ձայնը, որ չունէր
ոչ մի ել և էջ, հնչում էր միաձայն, թարմ օդի
մէջ տփուր և հանդարտ՝ նման քրդական որնդի
խոպոտ շշուկին:

...., Դաշտերից, սարերից ու անտառներից
հեռու — սկսեց նա — շը զիտեմ որ երկրում,
որ թագաւորի հոգերում, ապրում էր մի ոչ-
խար, որ մի օր յանկարծ առիւծի փախւեց...

,, Օչխար նի չի տեսել: Գլուխը կախած
ուտում է և ոչ որի չէ վիսասում. կուից միշտ
խուսափում է և երբ մորթելու են տանում,
դանակի տակ խոկ ձայն չէ հանում... .

,, Մեզ շատ է պատահել ոչխար մորթել,
Եւ միշտ, երբ աշքերս ընկել է մորթւովի աշ-
քին, կարծես ոչխարը առել է մեզ. , ինչու էք
տանջում ինձ, չէ որ աշխարհս մեծ է, գուք
էլ կարող էք ապրել, ես էլ, չէ որ ձեզ արգելք
չեմ լինում կեանք վարելու, ձեզ չեմ լինասում.
ընդհակառակը միշտ կաթ ու խղ եմ տալիս,
բուրդ հասցնում. ինչու էք ինձ մորթում,
ոչնչացնում...

,, Եւ միշտ, որպէս նրան պատասխան, ար-
գարացրել ենք մեզ, թէ ուտել ենք ուզում,
պիտի քեզ մորթենք, որավիճակ մեր ատամները
միս ծամել, ձեռքերնիս յօշոտել են ուզում...

,, Ու մորթել ենք անխնայ, մտածելով որ
ոչխարն ու եզը, տաւարն ու ֆլան ստեղծւել
են մեզ կերակրելու, մեզ ծառայելու...

,, Այդպէս էին համոզւած Մուսան ու Մահ-
մուլը, Օսմանն ու Զաֆարը, Օմարն ու Շարա-
ֆը... Եւ որովհետեւ այդպէս էին համոզւած,
ոչխարը առիւծ գարձաւ և նրանց պատառուեց...

,, Զննել էք երբեք վառօդը՝ մօտից:

,, Մե, աղտոտ, փոքրիկ մի հատիկ է նա:

Նեամիր ուր կուզես, տրորիր ոտքիդ տակ, փա-
կիր ամանի մէջ—ոչնչով չի ցոյց տալ իր զօ-
բութիւնը։ Խննարձ, փոքրիկ, կծկւած իր հա-
մար՝ միշտ կր մնալ և ոչ սրի միաս չի տալ։

,,Բայց, փորձիր մէկ այդ խոնարհ հատիկի սրտին մօտեցնել մի կայծ. փորձիր այդ կայծը բաց թողնել մանաւանդ մի խումբ, միմեանց կողք - կողքի տւած հատիկների մէջ և ինչ կը տեսնես... Դիմացիր այն ժամանակ, եթէ կարող ես: Ոչ թէ միայն քեզ, ոչ թէ Մուսաներ կամ Շարաֆներ, այլ լեռ ու անտառ կը ցրւի, փոշի կը գարձնի և գլխիդ կը փլեցնի...»

,,Ու ոչխարը առիւծ գարձաւ, բաշն ու պոշը ցիցեց, սստնեց, ճիրաններ պարզեց ու որքան տանջող ուներ, մէկ մէկ պատառուեց, մէկ մէկ տրորեց...“

,, Ու կայծն ընկաւ վառողի մէջ, հատիկ-ները կրպք—կոպքի տւին, կայծը քայլեց շանթի նման, յետոյ ծուխն ելաւ. ինու և ձոր քարու-քանդ արեց ու ինչքան գայլ կար՝ տակովն ա-բաւ, ինչքան բորսնի կար՝ զան ու ցրին. տւաւ...»

„Սյովիչս է լինում, երբ կայծաքարին երկաթով ամուր են խփում, երբ հարւածը սրտի խորն է թափանցում:

, ,Այդպէս է լինում, երբ մռանում են որ

ոչխարը կարսկ է մի օք առիւծի փոխւել և այդ
առիւծի ճիրաններ ունինալ:

„Սյալիքում է լինում, եթե վառօդի հատիկ-ները կտըր—կտղըի են տալիս և տանջախների կայծը բնիկնում է նրանց սրտի մէջ...”

Երգեց ծերունին ու լսեց: Այս պատճենը

—Երպը պեղեցիկ է, ասացի ես—երպը
հրաշք չէ պատմում։ Բայց, ի՞նչ ես կարծում,
ծերունի, երկար արդիօք կայծը կը մ՞նայ իր
բնիած տեղում...

— Զը գիտեմ. ասաց նա մտախոհ — այս-
քան միայն գիտեմ, որ քանի վառդը չէ վեր-
ջացել, կայծը չէ հանդում. կրակը դատարկ տա-
րածութիւն չէ սիրում...

Յետոյ ելաւ, դէպի վրանկը քայլեց և երբ
հասել էր, կանգ առաւ, դարձաւ ու աւելացրեց:

—Եղիդին էլ մի հրպ ունի, լսել էք...Նա
այսպէս է սկսում:

..., Կռանկը սալին, կռանկը սալին, և
դատարկ գետնին...»



Դաշտը միջնում էր, մշուշը սեանում, քամին սպատկանում: Հեռու, շատ հեռու, երկի սկ, ժայռոտ լեռներից, գուցէ վայլը կամ գուցէ մենակ մնացած սրի է զաղան՝ տխուր ու երկար ռռնում էր մթութեան մէջ և երկնքի վրայի աստղերը մի առ մի վառում—ցողում էին պլապլուն փայլով, դողֆոջուն լոյսով...

A decorative horizontal flourish or scrollwork design, symmetrical with floral and leaf motifs, centered at the bottom of the page.

ՀՀ Ազգային գրադարան



NL0370255

59937

